

SBS Գործելակերպի Կանոնագիրքի մասին

SBS անկախ ազգային հանրային հեռատեսիլի, ձայնասփիռի և թուլային մամուլի ծառայություն մըն է աստրալիական համայնքին հանդէպ պատասխանատուութեամբ ինչպէս որ սահմանուած է **մեր կանոնադրութեան** մէջ: Մենք կը ֆինանսաւորուինք աստրալիական կառավարութեան կողմէ և ամէտրական եկամուտներու միջոցով ինչպէս գովազդներ:

Մեր կազմակերպութեան մէջ մենք կը կիսենք յատկանշական աստրալիական պատմութիւններ, տեղական և միջազգային լուրեր և ընթացիկ իրադարձութիւններ, սփորոջ, միջազգային թատերախաղեր և վաւերագրական ֆիլմեր, կերակուր, շարժապատկեր և տեղական ձայնասփիռի ծառայութիւններ 60-է աւելի լեզուներով: Մենք նաեւ Բնիկ Ժողովուրդի պատմութեան տունն ենք, Ազգային Բնիկներու Հեռատեսիլը (NITV) յայտագիրներ կը տրամադրէ Բնիկներու տեսանկիւնէն:

Ապահովելու համար որ մեր յայտագիրները կը համապատասխանեն համայնքի ակնկալիքներուն, մենք ունինք SBS Գործելակերպի Կանոնագիրքը, որ կը պարունակէ SBS-ի բոլոր յայտագիրներուն օրէնքները և չափանիշները – հեռատեսիլի, ձայնասփիռի, առցանց կամ ընկերային մամուլի վրայ:



Գործելակերպի Կանոնագիրքը կ'ընդգրկէ կարեւոր հարցեր ինչպէս՝



ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ

Ինչպէս մենք կը տրամադրենք հաւաստի եւ յարմար նիւթեր

- Մենք անկախ որոշումներ կը կայացնենք մեր բովանդակութիւններուն վերաբերեալ:
- Մեր լուրերու և ընթացիկ տեղեկութիւններու բովանդակութիւնները ճշգրիտ են, հաւասարակշռուած և անկողմնակալ և հասարակութիւնը հետաքրքրող:
- Մենք կ'ընդունինք տարբեր տեսակետներ և հեռանկարներ – մեր բովանդակութիւնը կրնայ ըլլալ նորարարական և խթանիչ, ինչպէս նաեւ վիճահարոյց և գրգռիչ:



ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹԻՒՆ

Ինչպէս կ'օգնենք որ ձեր նախընտրած նիւթերու ընտրութիւնը կատարէք

- Տեղեկութիւն կը տրամադրենք որպէսզի կարենաք ընտրել բովանդակութիւնը որ ճիշտ է ձեզի համար և որեւէ երեխայի և երիտասարդի համար որ ձեր խնամքին տակ կը գտնուի:
- Կ'ապահովենք որ գովազդը կը գանազանուի մեր բովանդակութեան և օրէնքներ ունինք որոշ տեսակի գովազդներու տեղադրման վերաբերեալ:
- Հնարաւոր ցաւալի բովանդակութեան պարագային, նկատի կ'առնենք հնարաւոր լսարանը, զգայնութիւն կը կիրառենք, զգուշացումներ կը տրամադրենք երբ յարմար է և միայն այդ նիւթը ցոյց կ'ուտանք եթէ խմբագրական տեսանկիւնէն յարմար է:



ՅԱՐԳԱՆՔ

Ինչպէս կը կիրառենք եւ կը խրախուսենք յարգանքը




- Կը խուսափինք նիւթերէ որոնք կը նպաստեն նախապաշարումներու և խտրականութեան, ներառեալ կարծրատիպերու անարդարանալի գործածութեան, նկատի առնելով կացութիւնը:
- Մենք բովանդակութիւն կը տրամադրենք անգլերէնէ զատ տարբեր լեզուներով և կը քաջալերենք տարբեր տեսակետներու արտայայտութիւնը:
- Չզայուն ենք Բնիկներու հարցերու ներկայացումներով և կը հետեւինք Ապօրինի և Թորրես Նեղուցի Ժողովուրդներու մշակութային արարողակարգերուն:
- Կը յարգենք մարդոց գաղտնիութիւնը, որ կը հաւասարակշռենք մեր տեղեկագրութեան պատասխանատուութեան հետ:



ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ինչպէս մենք պատասխանատու ենք

- Ձեզի հնարաւորութիւն կ'ուտանք ձեր կարծիքը արտայայտելու մեր բովանդակութիւններու և ծառայութիւններու վերաբերեալ, ըլլան անոնք շնորհաւորական կամ քննադատական:
- Գործելակերպի Կանոնագիրքով, մենք գանգատներու անկախ գործընթաց մը ունինք, որոնք կը հետազոտուին SBS մարդու իրաւունքներու պաշտպանին կողմէ:



Յաւելեալ տեղեկութեան համար
sbs.com.au/aboutus/sbs-code-of-practice